

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Էղար Քալանքարյան

Սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական վերածնումները, որոնք իրականացվում են ամբողջ աշխարհում, պայմանավորում են գործունեության շատ ոլորտների, այդ թվում՝ կառավարման դերի և նշանակության լուրջ փոխինություններ: Այդ ոլորտների թվում պետք է նշել պետական կառավարումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) և զորայ տեղեկատվական ցանցերի ստեղծումն արմատապես փոխում են համաշխարհային տնտեսական, տեղեկատվական հոսքերի պատկերը: Հասարակության համար կարևոր է պետական կառավարման կատարելագործումն ու արդյունավետ համակարգերի ներմուծումը, որոնք ազդում են հասարակական կյանքի որակի, մարդկանց մտքի և երկրում ծևավորվող կառավարման մշակույթի վրա:

ՀՀ-ում ամելախացումից հետո լուրջ փոխինություններ տեղի ունեցան տնտեսության, պետական, հասարակական ինստիտուտների շրջանում: ՀՀ անկախության անցած տարիներն արդեն հնարավորություն են տալիս խոսելու բավական կայացած պետական կառավարման համակարգի մասին, որտեղ իրենց դերն ու նշանակությունն ունեն SS-ի ներդրումն ու կատարելագործումը: ՀՀ հանրային կառավարման համակարգի ազատականացման և կայացման հիմքի վրա օբյեկտիվորեն բարձրացել է պետական կառավարման համակարգում SS-ի դերը ներքին պետական և տնտեսական հարաբերությունների ճիշտ ծնավորման և ընդունակության առումով: SS ոլորտում Հայաստանն իր հարկան ԱՊՀ և Մերձավոր Արևելքի երկրների շարքում համարվում է առաջատար երկրներից մեկը: Դրա հիմքը ստեղծվել էր թերևս այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանը դարձավ նախկին ԽՍՀՄ գիտական, գիտահետազոտական և բարձր տեխնոլոգիաների արտադրող հիմնական հանգույցը: Այս ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 1987թ., երբ, ըստ տարբեր հաշվարկների Հայաստանի գիտական և տեխնոլոգիական ոլորտում աշխատում էին շուրջ 100000 մասնագետներ՝ [1]:

Ունենալով հարուստ գիտակրթական ավանդույթներ և բարձրակարգ կարողեր՝ Հայաստանը ներգրավել է տեխնոլոգիական ոլորտի համաշխարհային բազմաթիվ ընկերություններ: Այսօր Հայաստանում արդեն գործում են Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ բարձր տեխնոլոգիաների ոլորտի մի շարք ընկերությունների գիտահետազոտական և ծրագրավորման կենտրոններ՝ [2]: Այդ կենտրոններն աշխատում են աշխարհի բազմաթիվ կազմակերպությունների կողմից կիրառվող գերժամանակակից տեխնոլոգիաներով և միջոցներով՝ թողարկելով նոր արտադրանք և ծառայություններ կամ առաջարկելով բիզնես խնդիրների նոր լուծումներ:

Բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, որոնցից շատերը տարածաշրջանային նշանակություն ունեն: Տարեկան միջինը 20-30% աճ է արձանագրում Հայաստանի տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետև SCS) ոլորտը: Մեր-

** Հոդվածն ընդունվել է 17.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեօյանը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կայումս գործում է 400 կազմակերպություն՝ 10000 աշխատողներով՝ շրջանառությունն անցել է 200 մյն դոլարի սահմանագիծը, և այս թվերն աճում են գործեք ամեն տարի:

Փոփոխության է ենթակվել նաև շուկայի կառուցվածքը: Եթե մի քանի տարի առաջ արտահանվող և ներքին շուկայում սպառվող արտադրանքի հարաբերակցությունը 80/20 էր՝ հօգուտ արտահանման, ապա այսօր դա գործեք հավասարագոր է 60/40-ի, աճել է SCS արտադրանքի ներքին սպառումը: Բնականաբար, ներքին շուկայի զարգացումը պահանջում է SCS նոր լուծումներ: Այսօր SCS-ն Հայաստանում ոչ միայն պատվերներ է հրականացնում, այլև անցում է կատարել առաջարկությունների և ծառայությունների դղորով[3]:

SCS զարգացման տեմպերով Հայաստանը բավականին առաջ է Վրաստանից ու Աղբեջանից: Եթե Հայաստանն ունի SCS 400 կազմակերպություն, Վրաստանը՝ 10, ապա Աղբեջանում ընդհանրապես այս դորոտում բարձր տեխնոլոգիական արտադրանք թողարկող ընկերություններ չկան. միայն պատրաստի արտադրանք են վաճառում: Synopsis-ի[4], National Instruments-ի [5], Microsoft-ի [6] ինովացիոն կենտրոնի, Nokia-ի [7] տարածաշրջանային համագործակցության համապատասխան կազմակերպություններ մեր հարևանները դեռևս չունեն:

Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում ազատ աշխատուժի տեղաշարժը վտանգ չի ստեղծի Հայաստանից «ուղեղների» նոր արտահոսքի համար: Մի քանի տարի առաջ այս դորոտում աշխատող հայկական խումբը սինգապուրյան ST Kinetics-ի համար լուծեց բարդ տեխնոլոգիական խնդիր, որի վրա նրանք 5 տարի չարչարկել են: Սինգապուրյան ընկերությունը նրանց բարձր աշխատավարձով հրավիրեց իր մոտ: Նրանք ոչ միայն չեն գնացել, այլև ST Kinetics-ը Հայաստանում է մասնաճյուղ բացել[8]: Նորիկիվ վերջիններին գործողության: Սակայն, պետք է այնպես ամել, որ մեր հանրապետությունում SCS աշխատողների աշխատավարձերը բարձրանան, տեղեկատվական բիզնեսն ավելի ճկուն և շահութաբեր դառնա և այլ:

Ոլորտի հետագա զարգացմանը կարող է միայն խոչընդունել որակյալ կադրերի պակասը. Հայաստանը SCS դորոտում այժմ ավելի առաջ է ընկել ներդրումների առումով, սակայն կադրերն են քի: Երևանի ճարտարագիտական համալսարանում, Էկոնոմիկայի նախարարության, Կրթության և գիտության, National Instruments-ի և USAID-ի համագործակցությամբ իրականացվել են միլիոնավոր դոլարների արժողությամբ ծրագիր՝ պատրաստելով SS դորտի որակյալ կադրեր: Եթե Հայաստանում տարեկան 2000 նոր կադրեր ի հայտ գան, դա կրերի ներդրումների տասնապատկմանը, քանի որ կադրերն ու ներդրումներն այս պարագայում սերտորեն փոխկապակցված են:

Տեխնոլոգիական ապահովածության առումով սկզբունքային է հաղորդակցության արդիական ենթակառուցի արկայությունը, որը հարմարեցված կլինի թե՛ գլոբալ ցանցերի ընծեռած պատեհություններից օգտվելուն, թե՛ տեղական նպատակներին արդյունավետորեն ծառայելուն: Հաղորդակցության ենթակառուցի կարողությունների սահմանափակությունը կամ անաստեղիությունը (բարձր զմի կամ պատշաճ գիտելիքների ու հմտությունների բացակայություն) կարող է ոչ նպաստավոր պայմաններ ստեղծել երկրի համար հարուցելով ավելի մեծ կախվածություն արտաքին հանգանքներից, ինչպես նաև ավելի շեշտել, քան մեղմել հասարակության մեջ առկա սոցիալական անհավասարությունները: Ընդգծվում է այն փաստը, որ Ասիական երկրները ժամանակին մեծ ներդրումներ են կատարել հաղորդակցության ենթակառուցի մեջ[9]: SCS-ի ռազմավարություններ մշակողները պետք է իմանան, որ SCS-ը չեն գործում մեկուսի: Օգուտները և

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Թիսկերը կախված են սոցիալական, տնտեսական և կազմակերպական համատեքստից, որում ՏՀՀ-ը կիրավում են[10]:

Պազմավարական առաջնահերթություններից մեկը հնարավորություններ ստեղծելն է՝ օգտագործելու ՏՀՀ-ը տնտեսության այն սեկտորներում, ուր տվյալ երկիրն ունի մեծագույն ներուժը: Սա մասնավորապես ենթադրում է կարողություններ հարմարեցնելու, պահպանելու, տեղայնացնելու և ձևափոխելու գոյություն ունեցող ՏՀՀ-ի լուծումներն ըստ տեղական հասուն պահանջների սկզբունքին: Մեծ կարևորություն ունի ՏՀՀ-ի տեղական հասարակական-մշակութային համատեքստում հնաստավից, օգտակար և արդյունավետ կիրառություններ նշակելը: Իրական կարիքների՝ ՏՀՀ-ի լեզվով ձևակերպված արտահայտումը խթանում է նորարարությունը և լրացուցիչ տեղ բացում տեղական արտադրության զարգացման համար: Դա նշանակում է մի կողմից՝ համաշակորեն բաշխել տեղական կարողությունները արտահանման և ներքին շուկայի համար նախատեսված արտադրության միջև, իսկ մյուս կողմից՝ առաջնորդվելով ՏՀՀ-ի արդյունավետ օգտագործման խելամիտ ռազմավարությամբ, տեղական արտադրության շնորհիվ խուսափել լիակատար կախման մեջ ընկնելուց տեխնոլոգիաների ներմուծումից:

Անդրադառնալով տեխնոլոգիական և սոցիալական կարողությունների անփոխարինելիությանը՝ պետք է նշել, որ մարդկանց սովորելու հմտությունները, ունակությունները և հնարավորությունները արևազգն նույնքան կարևոր են, եթե ոչ ավելի կարևոր, որքան նոր տեխնոլոգիաներ արտադրելու կարողությունները: Առաջին պլան է մղվում գիտելիքը և դրա օգտագործման մեջ ունեցած գերազանցությունը: Ընդ որում հաղորդակցության ցանցերի հարաճուն տարածմանը գուգրնեաց ավելի ու ավելի է մեծանում կրթության դերը:

ՏՀՀ-ի զարգացումը պահանջում է գիտության և տեխնոլոգիայի պատշաճ քաղաքականություն: ՏՀՀ-ի նորարարական կիրառությունների հնարավորությունը, բնականաբար, կապվում է տեղական կազմակերպությունների՝ հետազոտական և նոր մշակումներ կատարելու ունակության հետ: Այն գիտելիքի հետ միասին, որ ստեղծվում է իր կիրառության համատեքստում, զարգացող երկրների համար մեծ նշանակություն ունեն գիտելիքի արտադրության և փոխանակման նոր եղանակները: Այս նոր եղանակներին բախվելով՝ գոյություն ունեցող կրթական և գիտահետազոտական հաստատությունները կանգնում են նոր խնդիրների առջև: Այս խնդիրները թելադրում են փոփոխություններ կազմակերպական եղանակների և հաստատությունների մոտեցումների մեջ:

Վերջապես, հստակ ռազմավարություններ և քաղաքականություններ են պահանջվում ՏՀՀ-ը երկրի սոցիալական և տնտեսական զարգացմանը ծառայեցնելու համար, երբ դրանք տեղում են, ապա նարդկային և տեխնոլոգիական կարողությունների մեջ կատարվող սահմանափակ ներդրումը կարող է ունենալ զարգացման նպատակներին ծառայող տևական, իսկանչ ագրեցություն և այլն[11]:

Վերջին տարը տարիների ընթացքում ծրագրային ապահովման և ծառայությունների սեպմենտը արծանագրել է հիրավի լուրջ աճի տեմպեր՝ ապահովելով 27% տարեկան աճ: 2010թ. Հայաստանի ՀՆԱ-ում ՏՀՀ ոլորտի մասնաբաժնը կազմել է շուրջ 1.7%, ինչը կարող է համեմատվել Հնդկաստանի (1.4%) և Գերմանիայի (1.3%) հետ: 2008-2011թթ. ընթացքում ոլորտում գրանցվել է 16 % միջին տարեկան աճ: Ոլորտի մասնաբաժնը արտահանումների ընդհանուր ծավալում աճել է 2003թ. գրանցված 3.6 %-ից մինչև 2010թ. 8.55%, ինչը վկայում է Հայաստանի տնտեսության համար ծրագրավորման ոլորտի աճող նշանակության մասին, որն ուղղված է արտահանող ձեռնարկությունների զարգացմանն ու ընդայմանը[12]:

ՏՀՀ ոլորտի հիմնական ցուցանիշները հետևյալն են:

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015


- ոլորտում ակտիվ աշխատում են ավելի քան 396 ընկերություններ.
- ոլորտում ներգրավված է 11560 մասնագետ.
- ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է շուրջ 474.9 մլն ԱՄՆ դոլար.
- 2014թ. ոլորտում գրանցվել է 25.2% աճ[13]:

Այս ամենը վկայում է <<-ում տվյալ ոլորտին տրվող մեծ ուշադրությունը: Հայաստանն ունի հետևյալ մրցակցային առավելությունները՝

- համաշխարհային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական ներուժին ֆորմատիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում,
- բարձրակարգ և շնորհալի մասնագետներ՝ տեխնիկական հմտություններով և անգերենի իմացությամբ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ *SS*) և հարակից այլ մասնագիտացումներով ԲՈՒՀ-ական ծրագրեր,
- ցածր վարձատրվող աշխատուծ և ցածր գործառնական ծախսեր,
- պետության կողմից զգալի աջակցություն ոլորտին և պատրաստակամություն բարեկավելու ներդրումային դաշտով,
- *SS* ոլորտի կայուն և շարունակական աճ,
- ուժեղ և հաջողակ սկիզբանքի ներկայություն Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում,
- խոշոր տրանսազգային ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձ,
- մոտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված օրենքներ ու նորմատիվային ակտեր:

Հայաստանի *SS* ոլորտը բավականին երիտասարդ է, չնայած նրան, որ մինչ ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանը համարվել է *SS* ոլորտի առաջատար կենտրոններից մեկը: Առաջին մասնավոր տեղական *SS* ձեռնարկությունները ստեղծվել են 80-ականների վերջում, իսկ 90-ականների կեսերին սկսեցին հիմնվել առաջին արտասահմանյան ընկերությունները: Այդ տարիներին դրվեցին ոլորտի հետագա զարգացման հաջող հիմքերը: Վերջին տարիներին ոլորտում գրանցվել է նոր ընկերությունների ստեղծման կտրուկ աճ: Գործող *SS* ընկերությունների թիվը 2010թ. հասել է մոտ 200-ի, ինչը կազմում է շուրջ 15% աճ 1998-2010թթ. [14]:

Գծապատկեր 1. *SS* ընկերությունների հիմնադրման դիմամիկան՝ ըստ տարեթվերի



Եվ այսպես՝ տարածաշրջանում Հայաստանը միշտ գրադեցրել է առաջատար

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՎՈՐՄԱՆ ԼՐԱՏՈՒ 2015

Դիրք բարձր տեխնոլոգիաների հետազոտության, մշակումների և արտադրության ոլորտում: Ներկայում ՀՀ ռորտի զարգացման և տեղեկատվական հասարակության կայացման նպատակային ցուցանիշները, համաձայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հայեցակարգի, ներկայացվում են հետևյալ կերպ՝ 15]: (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1.ՀՀ ՏՏ ռորտի զարգացման էվոլյուցիան

Հիմնական տվյալներ	2006թ.	2013թ.	2018թ
Տնային տնտեսությունների համակարգչային հագեցվածությունը	20%	50%	70%
Կրթական հաստատությունների համակարգչային հագեցվածությունը	10%	80-90%	100%
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգչային հագեցվածությունը	10%	80%	100%
Ինտերնետ հասանելիությունը բնակչությանը (Փիզիկական, ֆինանսական, բովանդական և լեզվական հասանելիություն)	15%	70%	90%

Այս ցուցանիշները ցույց են տալիս մարդկային կենսակերպի արագ փոփոխման հնարավորությունները և նրանում տեխնոլոգիաների տեղի և դերի բարձրացման հնարավորությունները, որն ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական երանգավորում: Այսինքն՝ ընդունակութ առօնամբ անհրաժեշտ է տեղեկատվական ռորտի ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտ, ապատեղեկատվության և ստահող քարոզության հակագործմք, համացանցում հայպեզու և Հայաստանին, հայագիտության բոլոր ճյուղերին ու հայությանն առնչվող տեղեկատվության անհրաժեշտ ծավալի և ուրակի, ինչպես նաև դրանց համաշափության ապահովումը: Նաև կարևորվում է տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածությունը չթույլատրված հասանելիությունից, տեղեկատվության կապի և հեռահաղողակցության համակարգերի ապահովումը պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պաշտպանության, մի շարք առաջնային ցանցերի պաշտպանվածության մակարդակի բարձրացման և այլ գործոնների կիրառման միջոցով:

Կարևորելով այս ռորտի արդյունավետությունը՝ 2000թ. ՀՀ կառավարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ռորտը հայտարարել է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, որին հաջորդել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված այս որոշման իրականացմանը՝ 2001թ. ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, բուհերի, տարբեր հիմնադրամների և մասնավոր ծեռնարկությունների հետ համատեղ մշակել է ՏՀՏ գլխավոր ռազմավարությունն ու ՏՀՏ զարգացման ծրագիրը՝ ուղղված Հայաստանում ՏՀՏ ռորտի հետագա զարգացմանն ու տարածաշրջանում Հայաստանը որպես ՏՀՏ կենտրոնի ճանաչմանը՝ 2001թ. մայիսին ՀՀ կառավարությունը հաստատել է ՏՀՏ զարգացման հայեցակարգը և գործողությունների պլանը, որը մշակվել ու ներկայացվել էր ՀՀ առևտության և տնտեսական զարգացման նախարարության կողմից՝ հիմնված ՏՀՏ գլխավոր ռազմավարության սկզբունքների վրա:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

2001թ. հուլիսին ՀՀ նախագահի որոշմամբ ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (ՏՏԶԱԽ), որի նախագահը ՀՀ վարչապետն է: Խորհրդի առաքելությունն է այդ ոլորտում միջնորդ հանդիսանալ ՀՀ կառավարության ու մասնավոր հատվածի, ինչպես նաև Սփյուռքի ու Հայաստանի միջև: Խորհրդի հիմնական նպատակներն են աջակցել ՀՀ կառավարությանը ու մասնավոր հատվածին Հայաստանում հզոր և կայուն SS ոլորտ ստեղծելու գործընթացում, ինչպես նաև նպաստել առաջատար տեղեկատվական հասարակության ձևավորման գործնարարությանը: 2002թ. ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից ստեղծվել է «Զեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը՝ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն աջակցելու նպատակով: Ձևվել Հայաստանում SS ոլորտի զարգացմանն ուղղված խոշորագույն ծրագիրն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ կառավարությունը համարում է միջազգային համագործակցության դաշտի կարևորագույն օդական մեջքը: Այս շրջանակում իրագործվել են տարբեր ծրագրեր՝ SS եվրոպական տարածաշրջանային ինստիտուտը (ԵՌԻԻԿԱՄ), որը ստեղծվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) և «Զեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» (EDMC) ծրագրերը և այլն:

2008թ. ՀՀ կառավարությունն ընդունեց ոլորտի զարգացման նոր տասնամյա ռազմավարությունը, որը ներառում էր Ենթակառուցվածքի զարգացման, SS շրջանակարտների որակակիրման բարձրացման, սկսնակ ընկերությունների համար ֆինանսավորման այլ ընթացակարգերի ստեղծման և այլ խնդիրներ: Նոր ռազմավարության հիմնական նպատակներն են՝

- ՀՀ-ում ձևավորել կայացած տեղեկատվական հասարակություն,
- Երկիրը հաղորդակից դարձնել գիտելիքի գոյացման համաշխարհային գործնարարություններին,
- զարգացնել հզոր և առաջատար ՏՏԶՈՐՈՒ,
- բարձրացնել համակարգչային հագեցվածության և համացանցի հասանելիության մակարդակը հասարակության բոլոր շերտերում և տնտեսության տարբեր ճյուղերում,
- կառուցել նոր տեխնոլոգարկեր և ինկուբատորներ,
- ստեղծել խոշոր վենչուրային հիմնադրամ,
- ընդամենք հայկական շուկայի ծավալները տեղական SS արտադրանքի և ժառայությունների համար,
- մեծացնել օտարեկյա ուղղակի ներդրումների ծավալները,
- կազմակերպել միջոցառումներ՝ ուղղված ՀՀ-ում SS ոլորտի զարգացմանն ու տեղեկատվական հասարակության ձևավորմանը և այլն:

Այդ ռազմավարության իրականացման և ընդհանուր SS ոլորտի զարգացման համար պատասխանատու պետական մարմինը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն է:

2008թ-ից ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հասկացվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը Հայաստանում SS ոլորտի զարգացմանը պետական աջակցության ցուցաբերման նպատակով: Այս միջոցներն ուղղվում են SS ոլորտի հետազոտության, ոլորտի իրավիճակի վերլուծության, ոլորտի ցուցանիշների և ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցուցի պատրաստման, Հայաստանում կազմակերպվող տեղային, տարածաշրջանային և միջազգային նշանակության տվյալ ոլորտին վերաբերող միջոցառումների՝ ցուցահանդեսների, համաժողովների, գիտաժողովների, մրցույթների

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

կազմակերպման, արտերկրում կազմակերպվող ոլորտային նշանավոր միջոցառումներին Հայաստանի մասնակցության, ինչպես նաև այլ պետությունների, միջազգային կառուցմերի և ոլորտի վերազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող մի շարք ծրագրերի և միջոցառումների իրականացման համար ֆինանսավորմանը:

Ավանդական են դարձել ՀՀ կառավարության սերտ աջակցությամբ իրականացվող «Արմթեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների միջազգային համաժողովը և «Դիշթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված ցուցահանդեսը:

«Արմթեք» համաժողովների նպատակն է լուսաբանել Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող բարձր տեխնոլոգիաների ոլորտի աճը, խթանել միջազգային համագործակցությունը և ներդրումների ներգրավումը, նպաստել ՏՏՈ-ության մասնագետների միջև համագործակցությանը, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտը դարձնել հանրաճանաչ: Ամենամյա այս համաժողովը հաջորդաբար կազմակերպվում է Հայաստանում և ԱՄՆ-ում՝ [6]:

ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ինչպես այլ պետությունների՝ Հնդկաստանի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և այլն, այնպես էլ համաշխարհային ձանաշում ունեցող այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսիք են՝ «Մայքրոսոֆթը», «Ալկաթելը», «Հյուեթ Փակարդը», «Սան Մայքրոսոփթը», «Նեյշն Ինսթրումենթսը», «Մենթոր Գրաֆիքսը», «Սիսկոնե» «Ինթելը» «Սինոփիսիսը», «Դիմեքը» և այլն:

ՀՀ կառավարության կողմից ընդունված ՏՀՏ ոլորտի գարզացման նոր ռազմավարության նպատակներից է նաև Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորումը, մասմավորապես համակարգիչների օգտագործման և ինտերնետի հասանելիության ծավալների էական մեծացումը: Այս նպատակին հասնելու համար մշակվել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրը, որի նպատակն է՝

- ապահովել բնակչության համար համակարգիչների ձեռքբերման մատչելիությունը և հասանելիությունը,
- պատրաստել համակարգային տեխմիկային և համապատասխան ծրագրային փայտերներին տիրապետող աշխատուժ,
- մեծացնել ինտերնետի հասանելիությունը ազգաբնակչության համար և խթանել էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը բնակչիների կողմից,
- նվազեցնել ոչ լիցենզավորված ծրագրային փաթեթների տարածումը:

ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» №7[17] արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը՝ հաջորդող մի քանի տարիներին իրականացնելու համար:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի առավելագույն կիրառումը խթանելու նպատակով 2010թ. ՀՀ կառավարության կողմից ներդրվել է www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը, որի նպատակն է մեկտեղել ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների հիմնապաշարները և հարմարավետ միջազգային ստեղծել դրանց օգտագործման համար: Կայքում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրո-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

նային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման, էլեկտրոնային գնումներ, և այլ ծառայություններ: Էլեկտրոնային կառավարման պորտալի համալրումը նոր ծառայություններով կրում է շարունակական բնույթ: Ներկայունս ներդրվել են այլ էլեկտրոնային ծառայություններ հետևյալ դրուտներում. էլեկտրոնային առողջապահության, էլեկտրոնային կրության, էլեկտրոնային կենսաթոշակային համակարգի, էլեկտրոնային նույնականացման համակարգի և այլն:

Վերը նշված մի շարք նպատակների և դրուտի զարգացմանն ուղղված այլ ծրագրերի և միջոցարումների կամքակի կոչման նպատակով ՀՀ կառավարությունը վարկային համաձայնագիր է կնքել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հետ, որի արդյունքում 2011թ-ից մեկնարկել է «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիրը»: Այն ներառում է մի շարք ենթածրագրեր՝ ուղղված Հայաստանում SCS ենթակառուցվածքի զարգացմանը, դրուտի զարգացումը խթանող ծրագրերի իրականացմանը, տեղեկատվական հասարակության կայացմանը և այլն:

Մասնավորապես ծրագիրը ներառում է հետևյալ ենթածրագրերը.

- Համահայկական լայնաշերտ կապուղի և կառավարական ցանց,
- ՀՀ-ում հավաստագրման կենտրոնի ներդրում,
- «համակարգիչ բոլորի համար ծրագիր», «Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի հիմնադրում», «Ֆինանսական օժանդակություն նորարարությանը գիտելիքներ և տեխնոլոգիաների կիրառում պահանջող ընկերություններում»,
- «Աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների - գիտատար ոլորտների զարգացմանը» և այլն:

2011թ-ից մեկնարկել է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող Տնտեսական զարգացում և շուկայական մրցունակություն ծրագիր (EDMC), որը ի թիվս տնտեսության այլ ոլորտների, նպատակառուղղված է լինելու նաև SS ոլորտում ՓՄՁ-ների կարողությունների զարգացմանը: Նախագծի համախառն բյուջեն կազմում է 17 միլիոն ԱՄՆ դոլար և այլն:

2012թ. Հայաստանի Հանրապետության Կառավարության, ԱՄՆ ՄԶ գործակալության, «National Instruments» ընկերության (NI), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (<ՊՃՀ>) և Զերնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (ԶԻՀ) ակտիվ նախաձեռնությամբ մեկնարկեցին Հայաստանի զարգային ճարտարագիտական լաբորատորիայի /Armenian National Engineering Lab (ANEL)/ հիմնադրման աշխատանքները: Ծրագիրը նպատակ ունի բավարարելու ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնոլոգիական որակավորում ունեցող որակյալ մասնագետների և շրջանավարտների պահանջարկը, որն այսօր առկա է ճարտարագիտական ոլորտում: Դա կօգնի Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերություններին լրացնելու աշխատակիցների պակասը, ժամանակակիցների պահանջմանը և առավել նորարար բիզնես գործունեություն այդպիսով բարձրացնելով իրենց միջազգային մրցունակությունը:

2012թ. դեկտեմբերին ԱՄՆ Սիլիկոնյան հովտում՝ Plug & Play տեխնոլոգիական կենտրոնում բացվեց Հայաստանի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների /SPS/ ներկայացուցական գրասենյակը: Գրասենյակը գործելու է որպես հայկական ՏԲՏԸնկերությունների համար ԱՄՆ-ում վաճառքների և ներդրումների խթանման

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կենտրոն, որը կապահովի հայկական *SS* լորտի տեսանելիությունը և ներկայությունը ԱՄՆ-ի շուկայում, հայկական *SFS* արտադրանքի և կարողությունների ներկայացումը և առաջնադաշտում ԱՄՆ-ում, ինչպես նաև բիզնես կապերի ստեղծումը հայկական և ամերիկան ընկերությունների և ներդրողների միջև:

2012թ. դեկտեմբերին ՀՀ կառավարության և Խնճել Կորպորացիայի միջև ստորագրվեց համագործակցության հոլշագիր՝ կրթության և հետազոտությունների բնագա-վարում համագործակցության վերաբերյալ: Հուշագիրը շրջանակում նախատեսվում է ընդլայնել Հայաստանի և Խնճել-ի միջև համագործակցությունը ուսուցիչների վերապատրաստման, դպրոցներում համակարգչային հագեցվածության բարձրացման և կրթական բովանդակության ծևակորման ուղղությամբ, ինչպես նաև նոր համագործակցություն հաստատել ծրագրավորման և համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման ոլորտներում: 2012թ. դեկտեմբերին ստորագրվել է նաև հուշագիր՝ ՀՀ կառավարության և «Կորպորացիոն Ամերիկա» ընկերության միջև՝ Հայաստանում կիսահալորդիչների արտադրություն և *SS* հետազոտությունների ու զարգացման կենտրոնի մեջու և գործարկելու մասին:

Այդ նոյն տարում Հայաստանում ստեղծվել է առաջին ազատ տնտեսական գոտին, որի հիմնական նպատակն է՝

- նպաստել արտահանման ծավալների աճին՝ օստարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով,
- ստեղծել նոր աշխատատեղեր,
- ապահովել կայուն տնտեսական զարգացում:

«ՌԱԾ ՄԱՐՄ» ՓԲԸ և «ԵրԱՄՎՀՀ» ՓԲԸ տարածըներում ստեղծված ազատ տնտեսական գոտին ունի բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ծգորիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների/ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում: Ազատ տնտեսական գոտու շահագործողներն ազատված են շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատորքի վճարման պարտավորությունների [18], այսինքն՝ ՀՀ կառավարությունը հնարավորինս աջակցում է այս ոլորտի ծեռնարկություններին՝ համապատասխան արտոնություններ սահմանելով և այլն:

Տեղեկատվական համակարգերի կատարեկագործումը և նոր տեխնոլոգիաների ներդնումը ՀՀ պետական կառավարման համակարգում, ենթադրում է մեր երկրի մուտքը գլոբալ տեղեկատվական տարածություն, հնարավորություն և տալիս ստեղծելու անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, մասնակցելու տեղեկատվության փոխանակման միջազգային գործընթացին, ինչպես նաև ապահովելու պետության միջազգային դիրքերը՝ օգտագործելով տեղեկատվական ցանցերի ընձեռած հնարավորությունները: Պետական տեղեկատվական քաղաքականության մեջ *SS*-ի օրոքսորե աձող դերն ու նշանակությունը նպաստում են պետական կառավարման հետազա զարգացման կատարեկագործմանը: Այդ ամենը ներառում է քաղաքացիների, պետական և տեղական ինքնակարավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների շահերը: Վերջինիս կարևորությունը գիտակցելով՝ ՀՀ կառավարությունը համարժեք կերպով արձագանքում է այս ոլորտում համաշխարհային քաղաքականության խաղի կանոններին՝ զարգացնելով պետական կառավարման համակարգում *SS*-ի ներդրման գործընթացը, գրանցելով նորանոր առաջընթացներ և ծեռքբ-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դումներ: Այս ամենով հանդերձ՝ ՀՀ պետական տեղեկատվական կառավարման համակարգում կան բազմաթիվ չօգտագործված հնարավորություններ, մասնավորապես անհրաժեշտ:

- Կատարելագործել տեղեկատվական կառավարման սոցիալ-տնտեսական հիմքերի կայացման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտը,
- ՀՀ պետական տեղեկատվական կառավարման շրջանակներում ստեղծել միասնական տեղեկատվական հեմք,
- Վերանայել և կատարելագործել պետության տեղեկատվական քաղաքականության իրականացման հիմնական դրույթները, բաղադրիչները, իրավական հիմքերն ու նույնացները,
- հետևողականորեն կատարելագործել տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի ներդրմանն ուղղված ծրագրեր, որոնք հնարավորություն կտան իրականացնելու պետական տեղեկատվական արդյունավետ կառավարման ընթացակարգեր,
- պետական կառավարման և ՏԻՄ մարմիններում ծևավորել մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվավերլուժական համակարգեր՝ բարձրացնելու հասարակական գիտակցական մակարդակը և այլն:

ՏՏ դուրսն ինչպես զարգացած երկրների պետական և տնտեսական համակարգերում, այնպես էլ Հայաստանում ամենաարագ զարգացող ու խոստումնալից ճյուղերից է: Անցյալի հաջողությունները, օրըստորե շատացող բարձրակարգ մասնագետներն ու հայկական ծերնարկատիրական ոգին ոլորտի հետագա զարգացման լուրջ հեռանկարներ են երաշխավորում, որոնք էլ դրական դեր են խաղում պետական տեղեկատվական կառավարման արդյունավետության բարձրացման համատեքստում՝ խթանելով էլեկտրոնային կառավարման կատարելագործումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. www.mineconomy.am/arm/78/gortsaruyt.html:
2. www.mineconomy.am/uploads/Industry_Report_2011.pdf:
3. www.asue-sc.am/component/k2/item/365:
4. <http://www.synopsys.com/Company/Locations/Armenia/Pages/default.aspx>:
5. <http://russia.ni.com/>:
6. <http://www.microsoft.com/en-us/default.aspx>:
7. <http://www.nokia.com/ru-ru/>:
8. <http://www.golosarmenii.am/ru/20180/headlines/13988/>:
9. Струговец В.М. Информационная политика СНГ: взгляд в прошлое, перспектива на будущее//Власть. 2011. № 6. Էջ 119-122:
10. Юдин И.В. Государственная информационная политика в Российской Федерации: проблемы и перспективы//Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. 2011, № 2-3, стр. 209-213:
11. Абрамов М.А. Роль управления информационной безопасностью в системе менеджмента предприятия газодобывающей отрасли//Проблемы экономики и управления нефтегазовым комплексом. 2010 №10 стр. 32-41.

ՄԵՄՐՈԴ ՄԱՅՏՈՑ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ ԼՐԱԾՒ 2015

12. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ 2010թ. հետազոտություն <http://www.mineconomy.am/up/files/IndustryReport-ARM-50.pdf>:
 13. <http://www.mineconomy.am/arm/78/gortsaruyt.html>:
 14. Տե՛ս նույն տեղում, <http://www.mineconomy.am/up/files/IndustryReport-ARM-50.pdf>:
 15. «Հ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակազ, 28.08.2008, էջ 10:
 16. «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ 2012թ. հետազոտություն», <http://www.mineconomy.am/uploads/State-of-Industry-Report-2012-EDITED-ARM.pdf>
 17. «Էլեկտրոնային հասարակության ձեվավորման հայեցակարգ (2010-2012թ.), www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc:
 18. <http://www.mineconomy.am/uploads/State-of-Industry-Report-2012-EDITED-ARM.pdf>:

ԱՐԴՅՈՒՆՎԱՐ

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ՀՀ պետական կառավարման համակարգում Եղանակ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, ինչպես զարգացած երկրների պետական և տնտեսական համակարգերում, այնպես էլ Հայաստանում ամենաարագ զարգացող ու խոստումնալից ճյուղերից է: SS-ի և զլորալ տեղեկատվական ցանցերի ստեղծումն արնատապես փոխում են համաշխարհային տնտեսական, տեղեկատվական հոսքերի պատկերը: Կարևորելով SS-ի ունեցած դերը պետական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու գործում ՀՀ կառավարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարում է միջազգային համագործակցության դաշտի և արդյունավետ կառավարման կարևորագույն օլակներից մեկը: Պետական տեղեկատվական քաղաքականության մեջ SS-ի օրըստօրէ աճող դերն ու նշանակությունը նպաստում են պետական կառավարման հետագա զարգացման կատարելագործմանը: Այդ ամենը ներառում է քաղաքացիների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների շահերը:

Բանալի բառեր՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կառավարում, տեղեկատվական բիզնես, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, համագործակցություն, տեխնոլոգիական և սոցիալական կարողություն, տեղեկատվական հասարակություն, **SS հայեցակարգ:**

РЕЗЮМЕ

Эффективность использования информационных технологий в системе государственного управления РА
Эдгар Калантарян

Сфера информационных технологий является одной из наиболее быстро развивающихся и многообещающих отраслей в государственных и экономических системах как развитых государств, так и Армении. Создание ИТ и глобальных информационных сетей в корне меняет картину мировых экономических, информационных потоков. Правительство РА рассматривает сферу информационных технологий как одно из важнейших звеньев международного сотрудничества и эффективного управления, придавая важное значение роли ИТ в деле осуществления эффективной государственной политики. С каждым днем возрастающая роль и значение ИТ в государственной информационной политике способствуют совершенствованию дальнейшего развития государственного управления. Все это подразумевает интересы граждан, государственных органов и органов местного самоуправления, общественных организаций и иных структур.

Ключевые слова: *информационные технологии, электронное управление, информационный бизнес, информационные и вещательные технологии, сотрудничество, технологическая и социальная мощь, информационное общество, концепция информационных технологий.*

SUMMARY

Effectiveness of use of information technologies in the state governance system in the RA
Edgar Kalantaryan

The sphere of Information technology (IT) is one of the fast-growing and prospective branches in state and economic systems both in developed countries and in the Republic of Armenia (RA). The creation of IT and global technological networks has changed the whole picture of international economic and information flows. Emphasizing the role of IT in realization of the effective state policy, it is recognized by the government of the RA as one of the most important links in the international collaboration and effective governance. The increasing role of IT in the framework of state information policy promotes the further improvement in the state governance process. All that process includes the interests of citizens, state and municipal bodies, social organizations, etc.

Keywords: *information technology, e-government, information business, information and broadcasting technology, cooperation, technological and social power, information society, the concept of information technology.*